Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գավառներում 12 կ. 1909, Շաբաթ, Սեպտեմբերի 19-ին. Թիֆլիս. №38.



Худож.-Лит. С. Бызова, Тифлис.

ՄԱՄԷԴ ԱԼԻ ՇԱՀԻ ԵԼՔԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

[illegible]



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Մ Ա Տ Ի Ն Ե Ա Ն

Թիֆլիզի նախկին քաղաքագլուխ

## Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն



«Պալատում խօսք կայ նոր շահին ամուսնացնել, իսկ մանուկ շահը ոչ թէ կին է ուզում, այլ ծնողների. մանաւանդ հօր մօտ լինել—կամ թէ չէ երեխաների հետ խաղալ»

(Լրագրներից)

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1909 թ.

Տարի 4 ԽԱԹԱԲԱԼԱ 4 Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարուելու, քննադատուելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երգեհոլ ընթերցողները ԱՊԱՀՈՎԱԳՐՒԱԾ ԵՆ

ամեն տեսակ պատահարներից և խայտառակութիւններից

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մոսկովսկայա փ. № 19

Յայտարարութիւններ ամեն լեզուներով և խիստ մատչելի գներով։

Մահացուցակները մուքթա։

Մեր ընթերցողներին ման ենք ածում սեփական աէրօպլանով, ով

Բազմաշխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրօպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկւում ենք ձրի։

Խմբագրին կարող է տեսնել ով որ ուզը ունի և գոռ չէ՝ ամեն բնած ժամանակ, խմբագրատանը անժամանակ և փողոցներում բոլոր ժամանակ։ Ըստանձին բնդունելութիւններ չի ունենում, իսկ գաղտնի խօսք ունեցողներից խուսափում է։ Նիւթեր, յօդուածներ, ստոտանաւորներ, յայտարարութիւններ և այլն մենք էլ ենք ընդունում, փողով էլ, միայն ձանապարհածախսը ձերն է. տանից մարկայի նամակներ „սկզբունքով“ չենք ընդունում։ Յօդուածների համար վճարում ենք, եթէ արժան ենք համարում. իսկ անարժանների համար փող էլ որ տան, չենք տպել։





ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | |
|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. | գաւառը 5 ր. |
| Կէս տարուանը . . . . | 2 ր. | . . . 3 ր. |
| Երեք ամսուանը . . . | 1 ր. 50 կ. | |
| Ամիսը . . . . . . . . . . . | 50 կ. | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Սեպտեմբերի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 2 րուբլի։



Սեպտեմբերի 17-ին առաւօտեան 10 եւ կէս ժամին անակնկալ մահացաւ

ԴԱՒԻԹ ԳԱԼՍՏԵԱՆԸ

Որի համար յայտնում են ի գիտութիւն հասարակութեան վշտակիր ընկերները, Թաղումը տեղի կունենայ կիրակի, Թանդոյեան եկեղեցուց Խօջիվանք։



Դաւառական քաղաքներում, աւաններում և ընթերցասէր գիւղերում, հարկաւոր են լրագրավաճառ գործակալներ, որոնք յանձն առնեն «ԽԱԹԱԲԱԼԱՆ» տարածել, իրենց շրջաններում։

Պայմանների մասին դիմել Թիֆլիզ, խմբագրութիւն «Խաթաբալայի»։



ԱԶԴ

Մի խումբ հմուտ կանանց ձեռներեցութեամբ, սեպտեմբերի 22-ից Թիֆլիզում բացւում է ամենաբարձրագոյն կուրսեր կանանց համար։

ԱՒԱՆԴՒԵԼԻՔ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Դեղիկ՝ իր ստորաբաժանումներով, գործածութիւն պուդրի, կարմինի, չիբրիի, ֆիքսատուարի և սուրմայի։

2) Հանդերձապատում. գեկոլտէ,—մինչև ստինքները—և ստինքները։

3) Դէկրայի փեշ բռնելը, ցեխոտ և չոր եղանակներին։

4) Մանզալիս նազելի նայուածքներ։

5) Բիգիկլիլ, գիրք և այլ առարկաներ պահելը ձեռքում։

6) Վայելուչ կենցաղավարութիւն։

7) Բարեկամ, ձև և սիրաշահութիւններ։

Աւարտողները ստանում են ատտեստատ։



Լոյս տեսաւ և վաճառւում է

ԱՂ. ԽԱՏԻՍԵԱՆԻ

ՃԱՌԵՐ

Անցած, ներկայ եւ ապագայ ճառերի հաւաքածու

Գինն է ՁՐԻ

Ցանկացողները դիմեն հեղինակին՝ Քաղաքային տանը։



Պատրաստ է և մօտ օրերս կը բարձրանայ ու կիջնի Թիֆլիզում

ՕԴԻՆ ՉՈՒ ՄԵԾ ՆԱՒԸ

Քաղաքային տան ծառայողները և մանաւանդ դրանց վրայ սիրահարւած ծառայողուհիները, թող շտապեն վաղօրօք վերցնել ամբողջ տարւայ համար.

ՁՐԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ

Խմբագրներին և նրանց աշխատակիցներին տոմսակ ուղարկւում է միմիայն բարձրանալու օրը։

Մանրամասնութիւնները աֆիշայով

Օսկար


## ՏԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ

(Երկու ծանօթներ վազելում վերադառնալիս)

—Ձեզ վերայ ինչ տպաւորութիւն թողեց Էջմիածինը։

—Ի հարկէ լաւ, այդպէս էլ պիտի լինէր… նաւ ի հարկէ, չէր կարող պատահել որ…ի հարկէ դէ Էջմիածինը այն չէ, ինչ որ նրա… Թիֆլիզը ուրիշ, Էջմիածինն ուրիշ, բայց և այնպէս, նրա, Էջմիածինը մեր սիրտն է, ի հարկէ ոչ այն մտքով, ինչպէս որ հասկանում էք. բայց և այնպէս ի հարկէ Էջմիածինը հրաշալի է… ես ի հարկէ չեմ ուզում ասել, որ Էջմիածինը այն է, ինչ որ գիտէք… բայց և այնպէս ինչպէս որ կայ, կրկին և կրկին անգամ ապացուցում է, որ նրա… ի հարկէ ես այն չեմ ուզում ասել, որ մենք իբր թէ բոլորովին… նրա, ինչպէս ասել, Էջմիածինը իր տեղն ունի մեր պատմութեան, մեր իրականութեան մէջ, ի հարկէ մենք չպէտք է տարւենք զանազան մտաւոր ցնորքներով, բայց և այնպէս ի հարկէ չի կարելի ասել, թէ Էջմիածինը այլ ևս Էջմիածին չէ։

—

(Մի ուրիշ զոյգ—Բազուցիներ)

—Ինձ թւում է, որ եթէ մենք ուշադրութիւն դարձնենք, Արարատի և Էջմիածնի կայարաններում նաւթի հետք կարելի է գտնել։

—Շատ հաւանական է, որովհետև Բաքուն էլ այդպէս է եղել, դեռ հետքը գտել են, յետոյ հորերը փորել, յետոյ էլ զարգացրել վաճառականութիւնը

—Բայց այստեղ որ ծով չկայ։

—Է՛ ինչ կայ որ, կարող է և լինել. եթէ նաւթ լինի, կարող ենք ծովն էլ շինել տալ. մոյ տես, բոլորքը սարեր են, տեղն էլ աւազանի տեսք ունի, որ ջրերը-նաւթը թողնենք տեղումը՝ կարող է ծով էլ դառնալ։

—Ցետոյ տէրութիւնը կթողնի՞։

—Ի՞նչ պիտի ասի, որ չթողնի, ինքն աքցիզը կը վերցնի, կթողնի, ինչի չպիտի թողնի որ։

—Բա որ էջմիածինը այստեղ է՞։

—Դէ էջմիածինն էլ բաւական օգուտ կունենայ. փթին մի կոպէկ էլ որ Վանքին տալու լինենք. տարեկան մի քանի միլիօն փող կըտնէ, այն ինչ հիմայ՝ հարիւր հազար եկամուտ էլ չունի։

—

*Յայտնի մանկավարժները*

—Դերասան Պաւլովին, ինչպէս էք կարծում, լաւ չէ՞ որ եկանք։

—Նու, братъ безукаризненно լաւ էր. ես ինքս երբ գնացի վեհարան. նու ինչ ասեմ. քիչ մնաց արտասուէի, на что похожъ, ինքս ինձ ասացի, не ужели ասացի, հայ ազգը չի ապրում, որ այսպիսի վեհարան ունի. նու ի հարկէ հանգամանքները, вѣдь ты знаешь въ какомъ положеній мы находимся,—все-же и то хорошо, какъ прекрасно, замѣчательно на меня дѣйствовало бѣлое вино... это просто роскошь, а какіе порядки, фу... իսկի տեղ էլ չէին տալիս, որ նստենք, пахалы... մի քանիսը ուղղակի լրբութիւն էին անում, երկու անգամ էին ուտում, և ուրիշի համար բան չէին թողնում։

—

*Վարդապետների շրջանում*

—Մկրտիչ հայր սուրբ, դուք ինչ է, չե՞ք յոգնել։

—Ինչպէս թէ չեմ յոգնել. գիշեր ցերեկ ոտի վրայ հոգիս դուրս է եկել, բայց և այնպէս ես երբէք չեմ բողոքում, որ ազգիս ծառայութիւն եմ մատուցել.

—Ծառայութիւն, ծառայութիւն, իսկ ինչ է մեր ստացածը։

—Շնորհակալութիւնը։

—Ո՞վ և ում շնորհակալ եղաւ մեզանից։

—Ի՞նչպէս թէ ով և ում. բա տիկին Թոկրոկեանը, օրիորդ Բուռնութեանը, Աստղիկ Նազանեանը, Վարսենիկ Կակաղեանը։

—

—Հայր սուրբ, խնդրեմ ինձ մէկ տեղ տաք—ես պատգամաւոր եմ։

—Դուք ճրտեղի պատգամաւոր էք։

—Մեր տան կողմից։

—

—Ջանըմ, հազար վերստ ճանապարհ կտրել եկել եմ էջմիածին, վախտովը ես էլ հայ եմ եղել, գործեր եմ ունեցել, դուքանս լաւ յաջողութիւն բանում էր։

Է, ինչ անեմ, ընկերս մուխաննաթ դուրս եկաւ, հիմայ էլ ապրուստ չունեմ, բա ինձ չպէ՞տք է պատւէք, բա էլ ես հայ չե՞մ, բա էլ Լուսաւորչայ հաւատիցը չե՞մ։

Թուղարկու՝ Շէրլոկ-Հոլմս

## ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ...

—Դուք միթէ չեկաք, որ Համբարձումը դաւեր էր լարում և ազգի գոյութիւնը վըտանգի ենթարկում։

—Ի հարկէ եղբայր, բա խօ քոռ չէի, տեսայ, իմ իսկ աչքերով տեսայ, ականջներովս լսեցի, հոտոտելիքովս հոտ առայ, զգացմամբ զգացեցի և այլն և այլն և այլն։

—Իսկ ինչ էիք անում դուք Վեհարանում։

—Վեհարանում, ոչինչ. մենք գնացինք նայելու, նու ի հարկէ, ինչ կարող էինք անել, Վեհափառը հրամայեց թէ չէ, մենք վեր կացանք և այլն և այլն և այլն. խմեցինք և այլն, այնուհետև Վեհափառը ներս գնաց իր միւս դահլիճները և այլն և այլն և այլն։ Նախագահեց Սուքիասեանը, որ քիչ առաջ տեղակալ էր և այլն և այլն և այլն։ Տեղակալը ի հարկէ ասաց, որ մենք մեր պարտքերը չենք կատարում և այլն և այլն և այլն. մենք էլ ասացինք այո և այլն և այլն և այլն. Տեղակալից յետոյ Թաժակը շատ անտեղի, զոռով և համարեա թէ ներս մտաւ և այլն և այլն և այլն, ես այդ մարդուն չեմ հաւանում, թէև շատ և շատ լաւ տղայ է և այլն և այլն և սկսեց խօսել և այլն և այլն և այլն. Վեհափառը ասել էր, որ մենք պէտք է մի ճար անենք մեր գլխներին և այլն և այլն և այլն. ուֆ, Կոստանդին Թատրխեանն էլ մարդ է՞, ինչ իրաւունքով և այլն և այլն և այլն։ Բաղդան Դոլուխանեանը, ամէն ինձ սպանեց և այլն և այլն և այլն։ Ես չեմ կարծում, որ մեր ժողովից և այլն և այլն և այլն, բան կարելի լինի սպասել. նու, ի հարկէ մեր ընտրած մասնաժողովը և այլն և այլն և այլն, այն չէ, ինչ որ պէտք է լինէր, և այլն և այլն և այլն. բայց և եթէ խելօք ու օրէնքի համաձայն գործելու լինենք՝ բան կարող ենք շինել և այլն և այլն և այլն. արդէն Պետերբուրգից էլ հեռագիր ստացել ենք և այլն և այլն և այլն։

Ծիծակ

*Էջմիածնից վերադարձող մի պատգամաւորի տպաւորութիւնը*

Կղերանց ոմանք հազեր են սևեր,
Սիրեն մամոնայ, դարձեր են գևեր։

Գ. Վ.



***

Երազում
Պարտեզում
Մենայուռ ու տխուր ես նստած,
Կանձկեի քո տեսքին վառ ժպտով,
Եւ վաղուց, քո սիրուց կախարդուած,
Կրդձայի թախծալի կարօտով...
Կենսափիւռ
Հով զեփիւռն
Սգալար ինձ կ'լար... թորոռն
Տերեւներն սեւ երգեր ու մռմռնչ
Կարգէին ծառերին... շուռ առուն
Թիթի տակ շարունակ անմռունչ
Արցունքներ
Կ'թափէր...
Եւ մեղ-յուշ ու անուշ ես սահուն
Մեղեդի ձայնեցի քեզ համար.
Ու մարած իմ հայացք դէպ հեռուն
Տածեցի, սպասեցի անդադար,
Օ՛, թագուն,
Քո զայլուն.
...Դու եկար... ու իրար փարելով
Մենք առանց սիրառաս չերմ համբոյր...
Սեւաներ քո վարսեր ծալքերով.
Փռեցին իմ կրծքին... սեւաթոյր։
Քո աչեր
Ջերթ աստղեր՝
Ժպտացին վշտածին իմ դեմքին...
Ու մոռցած վիշտ ու ցաւ, ես առանց
Թախիծի նանզլեցի քո գրկին,
Ջերթ վայրի ալ վարդին յուշ թառած
Կիսամեռ
Մի թիթեռ.

Շաւիղ

## ԹԱԹԱՐԵՍԽՆԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

*Մեր սեփական աշխատակցից*

Էջմիածին.

I

Հենց որ հասայ շորերս կառքի մէջ թողած, իսկոյն Վանքը վազեցի. աչքերիս չէի հաւատում, բոլոր հայ մեծամեծները՝ վարդապետ ու տիրացուները հաւաքուել էին այնտեղ։

Վարդապետները եկած տիկնանց և օրիորդներին տեղ էին տալ, ոչ թէ հոգևորական դասի մէջ, այլև Վեհափառի կաթուղիկէյում։ Ուշադրութիւնը կատարեալ էր. բոլորովին սուտ է թէ հայերս համաձայն չենք կանանց իրաւահաւասարութեան. մենք պատրաստ ենք հալա մի երկու թարախ էլ աւել տալ, թաք թէ կանայք հետաքրքրուին մեր գործերով։

Թէև նախանձակալը, դաւաճանները և էլ մեծ թւով ստրկամտութեան բարձրը պաշտօնեաները գտնւում չէին այնտեղ, եկեղեցում՝ երբ պէտք է Վեհափառը հաճէր երգել, սակայն տաճարում կարգապահութիւնը բաւ ամենայնի հայկական էր. գոռում գոչումից բան չէր լսւում և յիշեցնում էր գաւթիկ օրւան մանուկների հաղորդութիւնը։ Երբ Վեհափառը դուրս եկաւ տաճարից, բոլորն էլ վազեցին դէպի սեղանատան դռները, այնտեղ կանգնած անշարժ մնացին, մինչև ժամը երկուսը։

Գրպանից մի կեղտոտ թաշկինակ գողացան։ Խնդրեմ այդ մասին հեռագրէք մայրաքաղաքի թերթերին։

Սեղանատան դանդը խփեց թէ չէ, ամենքն էլ կնծի-կուռի տալով ներս մտան և ով լուս, նա կուշտ՝ տեղեր գրաւեցին։ Համբարցում Առաքելեանը մի քարոզ ասաց, որ հերքեց Գրիգոր Արծրունու բոլոր ասածները։

Առհասարակ սեղանատանը մեծ աշխոյժ էր տիրում։ Սեղանակիցները վեր կացան այտերը կարմրած, աչքերը ծփծփացնելով։

II

Ժամը չորսին զանգերը ղօղանջեցին, բոլորն էլ հաւաքւեցան Վեհի դարպասի դռանը։ Պատգամաւորների մեծ մասը բացակայ էին, որովհետև ճաշից յետոյ քնել էին, կարգադրիչ յանձնաժողովը անկարգութիւններ շատ էր անել, օրինակ, չէր որոշել ճաշից յետոյ քնելու ժամը. այդ մասին խնդրեմ հեռագրէք մայրաքաղաքի լրագրներին, և մի լաւ պրատակոլ կազմէք։

Երբ Վեհը երևաց, սօցիալիստները ոչ միայն գլխները հանեցին, այլև երեսները տասնեակ անգամներ խաչակնքեցին. խնդրեմ այս բանն էլ Բէքէլին ու Ժօրեսին յայտնէք. որպէզսի նրանք էլ հետևին մեզ։

Երեկոյեան հրաժառութիւն էր։ Միաժամանակ սկսեց instrugliarի Նրատաշրջանը։ Բունս տանում է և ես շտապում եմ դէպի մահճակալ. եթէ բան տեսնեմ երազում, խակոյն կը գրեմ։

III

Բարիլոյս, մխ ներողութիւն դեռ չէ լուսացել, բայց ինտրիգների հետ և քէֆը շարունակւում է։ Թաժակը այստեղ է, նրա ուղարկած տեղեկութիւնների մեծ մասը սուտ է։ Խնդրեմ նկատողութեան չառնէք, լաւ տղայ է, թող չնեղանայ։

IV

13 սեպտ.

Ժամը 10-ից հաւաքւեցանք, 1/4 անց Վեհարանից դուրս եկանք, կէս ժամում հասանք եկեղեցի, 12 ժամին հազիւհազ կարգի եկանք, եթէ հայերիս մէջ կարգի կարելի է գալ։

Պատարագին երգեցողութիւնը չքնաշխարհիկ էր. երբեմն գոռգոռում էին, երբեմն էլ ծւծւում, իսկ ես առհասարակ աւելի ամաչում, քան թէ... օրինաւոր մարդը ամօթից գետինն էր մտնում. և որովհետև ոչ ոք գետինը չմտաւ, այդ հրաշալի արարողութիւնը կատարւելիս, ուստի կարծում եմ, որ Վեհափառից զատ ամենքն էլ գետին մտնելու խարջ էին, որը սակայն չեմ կարող ասել Բուդղան Դոլուխանեանի մասին, բայց ափսոս որ սա կարգ պահելու տեղ՝ ինքն էլ ջակամայ անկարգութիւններ էր անում, իսկ չափարներն իրանց մտրակներով և լկտի հայհոյանքներով ներդաշնակում էին հայկական հասարակութեան կարգը։

Համբարձում Առաքելեանը սեղանատանն էր, իսկ Թաժակը կողքիս կանգնած, լուռ և արտասւում և աղօթում էր։

V

Արդէն ժամը 3-ն է. պատգամաւորները սեղանատուն մտնելու համար գլխները ճղում են. ամենից գլուխն են նստած, ծանօթ և բարեկամ կանայք, մեծ մասամբ ոչ պատգամաւոր, մուտքը տոմսակներով է՝ որոնց համար տեղ չկայ։ անտոմսակաւորները շուտուց տեղերը գրաւել են. կարգը ճաշկակաճ և ƒrղակաճ է։ Առելը աւելի ամօթարեր է, քան թէ ծիծաղելի։ Երեկոյեան լինելու է ինտրիգների խորհրդածութիւններ.

Վայ քեզ ժողովուրդ, որ պատգամաւորներդ և մանուկ են և փոքր. էնչ էլ անձնապաստան... որի պատճառով և ոչ մի բանի պէտք չեն։

Ապտակոնի

## ԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ

Հիւանդը ներս է մտնում գրասենեակը գրւելու։

—«Ձեր անունը»

—«Իմ անունս, աղա, Պօղոս ա, ամա փալլա ինձ Պուղի են կանչըմ»։

—Լաւ, ուրեմն Պօղոս Ըը՜... ազգանունդ։

—«Ո՞նց ասեմ, աղա. մեզ համ Դրրանց են ասըմ, համ Դողռանց»։

—Նու, ուրեմն Պօղոս Դողռեանց։ Քանի՞ տարեկան էք։

—«Ըսէնց բան—քանութ տըրեկան եմ։»

—Որտե՞ղ էք ապրում։

—«Ես Ջիթախովի զաւօղում զարաւուլչի եմ»։

—Ի՞նչ է, ձեր հիւանդութիւնը։

—«Աղա, փալլա հմանչըմ եմ ասեմ...Ըը՜... պորտս ու զամազս ընկել ա»։

Ս. Դ.

## Ո՛ՆՑ ՋՈԿԵԼ



Էրէկլի.—Մեսրոբ! Ցէրեան քանի աղջիկայ շկօլ կայ?

Մեսրոբ.—Խի՛, այ մեռած.

Էրէկլի.—Խի պտի. հլա ասա տենենք?

Մեսրոբ.—Իրեքը լաւ շկօլ ա, մնացողը գիդամ ոչ. գիմնազ, պրօգիմնազ, Գայեանեան։

Էրէկլի.—Է՞, բա ըտոնք մնց են յիրարից ջոգւըմ։

Մեսրոբ.—Գիմնազի ախչկէրը կապիտ շոր են հաքնըմ, պրօգիմնազինը զարչնի, Գայեանինն էլ՝ մկան ռանգ (մոխրագոյն)։

Էրէկլի.—Ուրիշ նշան ասա, էդ լաւ չի, կարալ չեմ մտիս պահիլ։

Մեսրոբ.—Որ ըտենց ա, դէ լաւ անգաջ արա, ասեմ։ Էդ կարդացող աղջկէքը, քոմմա կաւալերով են ման գալի։

Մտիկ կտաս կաւալերի շլապկի կոկարդին, թէ գիմնազի տղայ էլաւ, հետի աղջիկը գիմնազի, թէ պրօգիմնազի էլաւ՝ պրօգիմնազի, թէ սեմինարի ևս թեմականի էլաւ, հօ Գայանինի աղչիկ ա։

—Հիմայ ճանաչեցի։ Ցարուկ

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ

### ՊԱՐՈՎԱԿԻՐ ԿԻՍԼԱՎՕԴՍԿԻՑ

*Մեծ խաթարալիտ պարոն Քեռապար Կալատուզովեանցին*

*Շամախեցի աբէլէն—տատմայր Գէօզալ-Աղաբաջիից*

*Վերջին*

*ՐԱՊՕՐՏ*

*Ողորմած Տէր,*

*Դաչաւոր կնանիքը փարթ-ա-փարթ թեա-գարիք ան տեանըմ իրանց քաղաքները վե-րադառնալի։ Փոքր պաւեսկայա քի, փոչտի-լիօնը պերըմ ա. կնիգ կայ քի հասուր մա-նէթ ա սաանըմ, կնիգ կայ՝ երկու հասուր, կնիգ կայ՝ հինգ հասուր։ Համա անանց կնանիք ալ կան քի, իրենց մարթան մին կոպէկ ալ չան սաանըմ։ Անանց մարթ ալ կայ քի, փող չի խրկըմ, ինքը կեամ ա կնգան տանիլի։ Հով քի շատ փող ա սաա-նըմ, նա ուրախանըմ ա, հով քի քիչ փող՝ աչկ-ունքան աղու ա թափըըմ. ան կնանի-քանց մարթը, որ կեամ ա իրան կնգան տանիլի, ապանամ ցեքներան կեայ իրենց մարթին կը խնդրան, որ չան թողնում քի աղապ վաղան նստան, ջայիլ կուալերների հետնան վերչին պառչաին անան։*

*Ան օրը Գեորգօրսկիի վաքզալըմը ձեր Թիֆլիզի տէրտէրների մինի հետնան պա-դրուչկա արած մանցիօն ի անըմ. վագօնը Բաքու բիզի ճանապարուէր, պերքի ըղւա-նոկը կոփալ ին, մին ալ տեսանք կնանիքը, մարթիգերքը հուարւեցին պլատֆօրմի վե-րա, մին հատ կնիգ նստալ էր չամադանի վերայ, թիւլացած, մազերը երեսին թափ-ւաց լեաց էր իլիմ։ Մարթ ամուսինը ցեքը կնգան ճակատին տիրած ասըմ էր «...սիրե-լիս, Մաշօ, դու սաղ լինես, ինչ անենք, որ կորել է, հոգ չէ, լաց մի լինիլ...» Գեանան տես եկաւ, որ կնիգը ցէքի պումամնիգը կորցրալ ա, մէչին մաաանիքներ, վեց մա-նէթ ալ լօտօ հաղ անելի սիպտակ փող։ Մարթ ամուսինը նորից ասըմ ա. «...Մաշօ ջան, կը գնանք Բաքու, նրանից լաւ մաաա-նի կառնեմ, վէց մանէթի փոխարէն հա-րիւր վեց մանէթ կտամ, աղաչըմ եմ, լաց մի լի-նիլ, աչքերդ կը ցաւի...» Համմա չէ, կնի-գը իրան սպանըմ ա, աչքերան գիլա-գիլա արթասունք ա թափըմ, չի ուզում տեղան պեացրանա։ Կուալեր տէրտէրս ալ հուա-տըմ ա կնգան լեացին, մօտացալ ա մխի-թարանք ա կարթըմ, քարոզում. «...կորուս-տըն գի ոչ գտանես, իզուր քեզ կը տան-ջես». ասըմ ա տէրտէրը։*

*—Տէր-տէր ջան, ասեցի ես, կռնան մին գրաղ քաշելով, կնանիքանց ոչ լեացին հա-ւատիր, ոչ ալ ուշաթափուելին, ատ կնգան ուրիշ փորացու ունի, նա փողի համար լեաց չի լինիլ։ Ախր, տէրտէր ջան, նա հինգ տարուայ կնիգ ա, հինգ տարի ա մար-թի երես ա տեանըմ, համմա ես, Գէօզալ-Աղաբաջիս, երեսուն տարի բեղերը բուլմիշ արած ադամարթի հետնան ապրալ ամ, տասն ութ արախա ամ ծնալ, ես հազար անգամ փորցալ ամ կնանիքանց։ Մին կըն-գան քի մէչքը փորան հատ իլաւ, մին կնգան քի երկու ունքերը խառնուած իլաւ, մին կնգան քի՝ վերևի պռոշը ներքևի պռո-շան երգան իլաւ, մին կնգան քի աչքերի տակը կեապուտած իլաւ, աթանց նշաներ ունեցող կնանիքը ջանրաղնիլ ան իլիմ, տրանց լացին, խօսքին հուատալ չի իլիլ։*

*Քու արև, Քեռապար աղեր, կասես լափ սուրփ ամ. հենցքի վագօնը հղի իլաւ, մին քեան մէութ չի անցկացած, ժանդարմը մին պումաժնիգ ցեքին փռնած մօտացաւ տէր-տէրին քի, ան կնգան պօրտամնը քիթալ անք, եկ պիտացանք, պրատակօլը կապանք, տիւ ալ, հինչպէս տէրտէր, շահադ ախպի-ատլ իլի։ Քինացինք կօնցիլար, հինգ-վեց հոքի նստեցին. տէրտէրը պումաժնիգը պեա-ցից. մէչան տես եկաւ վեց մանէթ սիպ-տակ փող, չորս ոսկի մաֆթիլի մաաանիք-ներ, մին գրադերքը կեարմուր եայլուխ վե-րայ դուխի ածած, մին մեդալիօն մէչին մին բալաջա շիքիլ պատկեր քաշած պու-մաժնիգ կրցնող կնիգը, մին ջայիլ ադի հետ-նան ցեքները մին-մինի վզով քցած։ Աս մէդալիօնին չիմիգնելս թամաշա արինք։*

---

## ՖԵԼԻԵՏՕՆ

### ՍԱՉԽԵՐԷԹԻ ՎԱՐԺԱՊԵՏԸ ԻՆՉՊԷՍ ՍՏԱՑԱՒ ՌՈՃԻԿԸ

(Պատկեր մի արարուածով)

*Դէպքը պատահում է Սաչխերէթ գիւղում, այս տարուայ անցեալ ամսում։*

*Հոգաբարձական ժողով է։ Մի կողմը նստած է, երկար փափախը գլխին, լայնե-րես, հաստաչրթունք քարտուղար Դաւիթ Բէգալօվը, որին չաղութեան պատճառով տեղացիները Դաւիթ ասելու տեղ «Դաթուի» էլ էին կանչում։ Միւս կողմը նստած է շի-րաջիանի ռումբու նման փքուած հաստա-փոր Ննովք Խօջայեվը։ (Սա այն Ննովք Խօջայեւն է, որ ինքը, եղբայրները, հայրը, պապը, մի խօսքով դրանց ազգից համարեա ամենն էլ, բացի կանանցից, Սաչխերէթի եկեղեցու երեցփոխութիւնը մինչև հիմա փօղրաթով էին վերցրել։ Ինչպէս որ Ախալցխայի շախկամը, եկեղեցին այնպէս էին կլպել, որ վերջին երեցփոխ Ննովքը առանց կլպելու կուլ տալով, դատարկ տաշտ Ուբե-ռովին)։*

*Ասում են թէ, դա մինչև երեցփոխ դառ-նալը կոպէկին երանի էր տալիս, երեցփոխ դառնալ թէ չէ՝ հարստացաւ ու հիմա գեղի ամենահարուստ մարդն է յիշւում։*

*Եղի մէջ արուած փոստը ճակատին քաշած, հաստ չօմբախանման ձեռնափայտը թաթու-մը բռնած, մի տարուայ կեղտը վրան՝ ակ-նոցը կօմբալ քթին գեմհար ուած, սեղանի վրայ պառկել էր մեր գունդ ու կծիկ եկած նախագահ Ննովքը։*

*Այդտեղ են գտնւում նոյնպէս և վարժա-պետը ու միւս հոգաբարձուները։*

*Վարպետյը բարձրանում է։*

*Վարժապետ.*—Պարոն հոգաբարձուներ, այս ամսի 15-ին մաաքիր եմ գնալ Թիֆ-լիզ։

*Ննովք.*—Գնում ես գնայ, ձեռքդ ով է բռնում։

*Վարժապետ.*—Հաշիւներս պէտք է մաք-րէք, թէ չէ դատարկ գրպանով ուր եմ գնալու։

*Ննովք.*—Հէր օրհնած, մի քիչ եօլա գնա, էլի։ Անցեալ տարուայ վարժապետի ռոճիկն էլ մինչև այսօր մնում է։ (քարտուղարին) Դաւիթ, Դաւիթ մի թղթին նայիր, տես ուսուցչարանին ով ինչքան է պարտ, զուցէ մի կերպ վարժապետի հաշիւը մաքրենք։

*Դաւիթ.* (կարդում է).—Պապեջանովը պարտ է 4 մանէթ ու կէս։

*Ննովք.*—Այդ Պապեջանովը ծախու ոչինչ չի՞ ունենալ, որ պարտքումը վերցնենք, տանք վարժապետին։

*Դաւիթ.*—Նա լաւ լաւ խոզեր է ծախում։

*Ննովք.*—Դէ որ այդպէս է, երեք գոճի բե-րել տւէք, տանք վարժապետին։

*Վարժապետ.*—Փոջենին ինչ եմ անում. ժամանակ էլ չկայ, որ մոլթեմ, ծա-խեմ յետոյ գնամ։ Այս շոգերին Թիֆ-լիս տանելն էլ շատ դժւար է (կէս ժա-մից յետոյ դատարան են բերում մի շարթւայ լոյս աշխարհ տեսած, մի վրացու և երկու սաքի գոճիներ)։ Այս մի շարթական գոճիներին ես ինչպէս տա-նեմ, ինչպէս պահեմ։

*Ննովք.*—Ոչինչ, տանելը հեշտ է։ Մինչև մի քիչ մեծանալը քաղաքում կաթնով կարող ես պահել։ (ծառային) Վանի Վանի, արի տար խոհանոցը ձգիր (գալիս է Վանին և ճղճղացող խոզե-րին տանում է ածում խոհանոցը)։

*Դաւիթ.*—(Շարունակում է կարդալ) Կաճ-կաճովը պարտ է 2 մանէթ. Կալաւով Դաւիթը 4 մանէթ ու կէս։

*Հին հոգաբարձուն.*—Կաճկաճովն ասում է, որ ես կոպէկ չեմ տալ, իսկ Կալաւո-վի հետ էլ առաջուց պայմանաւորուել ենք, որ վարժապետը ուսուցչարանի փողումը, խանութից նիւթեր բանեք տանի։

*Ննովք.*—Լաւ, այդ 4 մ. ու կէսը իրան պարտքն է. երկու մանէթն էլ հաշիւ կանենք, թող վարժապետը ինքն սաա-նայ Կաճկաճովից։

*Վարժապետ.*—Կալաւովի 4 մ. ու կէսը ես յանձն կառնեմ, իսկ Կաճկաճովի փողի հետ ես գործ չունեմ։ Դուք որ չէք կարողանում առնել, ես ինչպէս կարող

Ժանդարմը տէրտէրան հարցուց «Ցատուչ-կայ, բօլշի նիչե՞օ նետ» Տէրտէրը պատմած-ների պիւրթախս արաւ, քիչով բուջաղը պը-տրտեց։ Դէ խօսքը մեր մէջին Ծնա, Բեստպար տխպեր, ուրիշի չի տեսն, կնիք-արմատ ա, մին զալաթ ա արալ, պրծալ ա. պատմածնե-րի մէջան տիւս եկաւ մի բալաջա թուղթի կտոր, մէջին ռուսերան մանդր խօսքերով ադրեսներ կիրած։ Ժանդարմը կարթեց ադ-րէսները, եսով մին-մին կիրեց պրատակօլի մէջին։ Ես տա ադրեսները վեր կալայ, խըր-կըմ ամ քեզ, համմա խնթրըմ ամ, ուրիշի չի տեսնի։ Առաջի ադրեսն ա, Лазровск. школъ уч. 7-го класа Ֆլանքեստ Ֆլանքեստովին։ Երկուսնջին՝ Петербургъ артистическ. школъ, артистъ Ֆլանքեստովին։ Երեքինջին՝ Одѣсса, музык. бюро-устидентовъ Ֆլանքեստովին։

Ալի շատ ադրեսներ կար, համմա ռուսե-րան չամ կարըմ, մաքառ ընգալ ա։ Մենք տիւս եկանք, տէրտէրը ցեքս պաչեց, առեց տիւ սուրփ ես, ամ կնիքը ադրեսները կոր-չելի համար էր լեաց իլիմ, մին ալ բի մէ-ղալիօնի պատկերի համար։

Դէ, Ծնա պարով, էքուց ես ալ ճանա-պարհըմ ամ Բաքու։

Մնամ քեզ թամարզու քիւր՝

Դէօզալ-Աղաբաջի.



## ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ

***

Ես այլ աշխարհ կուզեմ գաղթել,
Ձգել շղթաս ստրկային.
Ես այն աշխարհ կուզեմ փոխուել,
Ուր մահ չը կայ մարդկային։

Որտեղ չը կայ ատելութիւն
Եւ ոչ չարիք, հալածանք,
Որտեղ չը կայ անարգութիւն,
Ո՛չ արտասուք, ոչ տանջանք։*)

Leonis

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի պ. խմբագիր.

«Խաթաբալայի» № 37-ում «Վերջին նորութիւններ» վերնագրով տպուած յօդուածում, Գասպար Կալատուզեանի ժեկնումը իր ախտալով գէպի ս. Էջ-միածին, որի մէջ գանուում էինք և մենք, Բախշօս ու Լաչքեարը, կարդա-ցինք և խիստ նեղացանք։ Դուք մեզ անուանում էք «գինեպաշտ». դա հիմնո-վին սուտ է և ես կարող եմ փաստե-րով հաստատել, որ վաղուց է գինու տեղ գործ եմ ածում կւաս ու երբեմն էլ լիմոնադ. իսկ պ. Լաչքեարը վա-ղուց է գինին տակաղ արել, որովհետև էլ նախկայ մաւայ չեն գնում. ուրեմն խնդրում եմ, Ձեր պատուական շաբա-թաթերթի հետևեալ համարներից մէ-կում հերքէք այդ լուրը։

Բախշօ

*) Խնդրում ենք այդ տեղը ցոյց տալ, որպէսզի մեր գաղթականներին էլ այդտեղ ուղարկենք։

Խմբ.

## ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

—Այ տղայ, հիմայ դու պիտի ճշմարիտը ցոյց տաս, թէ ինչ գիտես այս գործի մա-սին, լսում ես։

—Այո, աղա։

—Դէ տաս։

—Ինչ ասեմ.

—Ինչ որ գիտես։

—Ես ոչինչ չըգիտեմ։

—Ինչպէս թէ չըգիտես. դու գործի ըն-թացքում այնտեղ չէի՞ր.

—Այնտեղ էի.

—Ուրեմն տաս էլի,

—Ի՞նչ ասեմ աղա,

եմ տանում։

Դաւիթ.—(Շարունակում է) Ենովք Խօջայե-վը պարտ է եօթը մանէթ և տաս շահի։

Ենովք։ (Կոմրալ քիթը քորելով).—Այդ տաս շահին ինձ վրայ ի զուր է գրած։ Եօթը մանէթից չորսը դպրոցի վրայ եմ ծախսել, 3 մանէթումն էլ ահա այս մարկաները կտամ (ծոցից հանելով և վարժապետին տալով)։ Անցեալ օրը գնել էի, որ խնդիր գրել տամ, բայց չհարկաւորուեց։

Դաւիթ.—Տէնդելօզեանց Դաւիթօ՝ 3 մանէթ.

Ենովք.—Ասում են դա լաւ սազեր է պա-հում, թող 3 մանէթումը 2 սազ ու-ղարկի, բայց չէ, մանէթ ու կէս էլ ինձ է տալու, թող 3 սազ բերի, մա-նէթ ու կէսս ես վարժապետից կը տանեմ։

Զայնեք.—Չէ, չէ խեղճ է վարժապետը, քոնը դու տացիր։ (Կէս ժամից յետոյ բերում են 2 քասառ սազ, որոնք տե-ղները հագիւ են կանգնում և տանում են խողերի մօտ)։

Դաւիթ.—Խութեսեան Ալէքսանդրէ՝ եօթը մանէթ։

Միա. Հոգ.—Ալէքսանդրէն ինձ ասաց, թէ լաւ-լաւ կօշիկներ ունեմ, ուզում էք պարտքումը վարժապետին տէք։

Զայնեք.—Լաւ կլինի, լա՞ւ հեցցէ Ալէք-սանդրէն, շատ լաւ ուստա է (կէս ժամից յետոյ բերում են մի զոյգ հա-սարակ կօշիկներ և տանում ձգում վարժապետի գանձատունը։

Դաւիթ.—Կօկօզը պարտ է 2 մանէթ։

Ենովք.—Կօկօզը շատ ժուլիկ մարդ է. մենք չխառնուենք, թող վարժապետը գնալիս նրա խանութից բան առնի տանի (Դաւիթին) հիմա կարդա, տեսնենք բոլորն ինչքան եղաւ։

Դաւիթ (կարդում է).—Գալեջանովի գո-ճիքը

| | |
|---|---|
| Գալեջանովի գոճիքը | 4 մ.—50 կ. |
| Կալատովի նախան | 4 մ.—50 կ. |
| Ենովքի մարկաները | 3 մ. — |
| 2 հատ սազ | 3 մ. — |
| Ալէքսանդրի կօշիկները | 7 մ. — |
| Կօկօզի փողը | 2 մ. — |
| Բոլորը | 24 մ. |

Եթէ առաջւայ տացածների հետ հաշ-ւենք, վարժապետին պարտք կը մնանք 60 մ. տաս շահի 4 կոպ.

Ենովք.—Տաս շահի 4 կոպ. բուշուխ է, դրանից վարժապետը ձեռք կը քաշի. մնացածի համար էլ վարժապետը մեզ թուղթ կտայ, որ 60 մ. մեզանից ստանալիք ունի

Վարժապետ.—Վա՜, այդ 60 մ. համար դուք պէտքէ ինձ թուղթ տաք, ես ձեզ ինչու եմ տալու։

Միա Հոգ.—Վարժապետը ճիշտ է ասում, թուղթը մենք պէտք է տանք, որ գնայ այդ փողը Բարեգործական ընկ.- ից ստանայ, որովհետև նրանք վարժապե-տի վրայ գրել են, թէ ինչ որ մնայ, արի մեզանից ստացիր։

Ենովք.—Դէ, թուղթ բերէք, գրենք

Դաւիթ.—Մի ամիս կլինի, որ շկօլի համար մի շահու ալխտակ կաւիճ եմ առել ու փողը մինչև հիմա էլ չեմ ստացել, թուղթը դուք առէք։

Ենովք. (բարկացած).—Բար. ընկերութեա-նը նամակ գրելիս, կօնւերթն ու թուղթն էլ ես եմ առել։ Թղթի առնե-լը վարժապետի պարտքն է, որովհետև իրան համար ենք գրելու (Վարժապե-տը բերել է տալիս թուղթը)։

Վարագոյրն իջնում է։

Ստացած բաների համար Աստուած վարժապետին խէր տայ և իւրը պատ-մի թէ դրանց վերջը ինչ եղաւ.

Վարժապետի հօրաքրոջ եղբօր որդի

Մաղօ

Որովհետև իմ բարեկամ պ. Մաղօն հե-տաքրքրւում է իմանալ, թէ ինչ վախճան ունեցան ռոճիկուհս ստացածները, կպատ-մեմ մի առ մի։

Կօշիկներս անպէտք ու մանր դուրս ե-կան, ուստի 2 ր—50կ. ծախեցի Ֆօստի—պապարին։

Սազերը երկու օրւայ մէջ անհետացան և մինչև այսօր էլ չգիտեմ, թէ ո՞վ է տարել։

Խողերից երկուսը հիւանդացել են, իսկ մէկը, մի բուրլու կաթ խմելուց յետոյ, ճանապարհւեց էն դունիէն։

Ահա այսպիսի վախճան ունեցան իմ ռո-ճիկուհս ստացածները։

Սիրելի Մաղօ, որովհետև իմ գաղտնիք-ներս դու լրագրի մէջ ուզում ես յայտնել ու ինձ խայտառակել, իմացած կաց, որ սազերս դու ես գողացել, քեզանից ձեռք չեմ վերցնիլ և բերանիցս անպակաս կանեմ իմ այս անէծքը, որ «դու էլ դառնաս՝ հայ Վարժապետ»։

—Դէպքը ինչպէս պատահեց։
—Չըգիտեմ աղա։
—Ի՞նչպէս թէ չըգիտես, երբ այնտեղ ես եղել
—Ճշմարիտ եմ ասում աղա։
—Դէ բաս ասա է՛լի։
—Ի՞նչ ասեմ, աղա։
—Ջահրումար ասա, յիմար, ասա դու ինչ տեսար այս գործում։
—Ո՞ր գործում աղա։
—Մելիք Մազուտէլովի և Դարաղեան Միտրոպանի մէջ։
—Ես էգ բանը ինչ գիտեմ, թէ ոնց պատահեց։
—Դու դէպքի օրը այնտեղ էի՞ր.
—Ի՛նարկէ այնտեղ էի։
—Դէ էգ ասա էլի.
—Ի՞նչ ասեմ, աղա։
—Թէ Մէլիք-Մազուտէլովը որչափ յանցագործ է։
—Ես ինչ գիտեմ, աղա։
—Բա դու մարդ չե՞ս.
—Ոնց թէ մարդ չեմ, աղա։
—Դէ ասա էլի.
—Ի՞նչ ասեմ, աղա։
—Էն, թէ ով աւելի մեղաւոր էր սրանց գործի մէջ։
—Դէ էգ ես ինչ գիտեմ, աղա։
—Ոնց թէ ինչ գիտես. ասում ես որ դրանց կռւին ներկայ էիր։
—Այո ներկայ էի։
—Դէ ասա ինչ տեսար։
—Ես ոչինչ էլ չըտեսայ,
—Ի՞նչպէս թէ ոչինչ չըտեսար. յիմար, չէ՞ որ դու այնտեղ էիր.
—Դէ չըտեսայ. դասի խօ չէ. մէ բան որ չըտեսայ—չըտեսայ է՛լի.
—Հապա էլ ծոտեղ էիր։
—Հենց էնտեղ աղա։
—Ի՞նչու չըտեսար, թէ էնտեղ էիր.
—Գիշեր էր ու խիստ մութ, աղա։
—Դէ էդպէս էլ ասա, որ գիշեր էր է՛լի.
—Դէ ես էլ ասում եմ էլի.
—Ուրիշ ինչ տեսար։
—Ոչինչ չըտեսայ, բայց լսեցի որ միմեանց մի լաւ քոթկում էին։
—Յետոյ.
—Որ իրար չանկռտում ու հայհոյում էին.
—Ուրի՞շ, ուրի՞շ.
—Որ մէկը միւսի վրան ատրճանակ էր արձակում.
—Յետոյ
—Որ բղաւում, ճղաւում, օգնութիւն էին կանչում։
—Իսկ ով էր օգնում։
—Ոչ ոք, աղա։
—Յետոյ էլ ինչ գիտես։
—Ոչինչ, աղա։
—Ուրեմն գնա տեղդ նստիր, յիմար։

Բամբակ

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Օրդու Տանջուտեանին.—«Խաթաբալա»-յի 907 և 908 թւերի կոմպլէկտները արտասահմանի համար արժեն 6 րուբլի առանց կազմի, իսկ կազմով 8 ր.։

Գ. Սրամծանին.—Խնդրում ենք յայտնէք ձեր իսկական հասցէն. շատ կարևոր է։


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական, եւ առևտրա-արդիւնաբերական ոչ կուսակցական օրաթերթի

Առայժմ լոյս է տեսնում երկուշաբթի օրերը։

Հասցէն՝ Тифлисъ Редакція газеты «Сурандакъ»

«Գուտտեմբերգի» հրատարակութիւնները

(ԴԱՍԱԳՐՔԵՐ)

1. Քերականութիւն մայրենի լեզւի, Ա. Բ. և Գ. մաս. Ստ. Գալստեանի . . . 75 կ.
2. Ընդհան. պատմ, Հին-Դար, Վինոգրադովի, Թարգ. Խաժակի. . . . . . . 1 ռ. —
3. Գծագրութեան օրինակներ Գ. Լեոնեանի Ա. մաս . . . . . . . . . 20 կ.
4. Բ. մաս. . . . . . . . . . . . 20 կ.
5. Գ. մաս. . . . . . . . . . . . 35 կ
6. Դասագ. ընդհ. աշխարհագր. ա. բնական մաս, կազմեց Լ. Բարայեան. . . . 60 կ.
բ. մաս. Աւստրալիա, Աֆրիկա, Ամերիկա և Ասիա. . . . . . . . . 65 կ.
գ. մաս. Եւրոպա. . . . . . . . . . 50 կ.
7. Начальная книжка для арм. школъ, С. Мандиняна. . . . . . . . 55 к.
8. Մեթոդիկա, Ա. Ռուդէի փոխ. Յ. Տէր-Միրաքեանի. . . . . . . . 1—50 կ.
9. Հայկ. վայելչ. և գեղագր. Գ. Լեոնեանի տետրակ Ա. . . . . . . . 40 կ.
10, » » Բ. 40 կ.
11. » » Գ. 40 կ.
12. Ընդհ. աշխ. դասագ., մասն Ա. Թարգ. Ա. Արեգեանի. . . . . . . 60 կ.
13. Սեներօբոս, Համառօտ պատմ. քաղաքակրթութեան. . . . . . . 1 ռ. —
14. ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ, Աղայեանի, Փափազեանի, Ահարոնեանի և Թումանեանի. . . . . . 2 ռ. —

Գրախանութը գրքերը վերադիր վճարով ուղարկում է նրանց, որոնք ուղարկում են կանխավճար։ Գումարով գնողներին մեծ զեղչ։

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ» Г. И. Галустяну.

Գրախանութի գրացուցակն ուղարկւում է ՁՐԻ։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ՎԱՌՎ. ՍՄԲԱՏԵԱՆՑԻ

Պատրաստում են երկսեռ աշակերտներ բոլոր միջնակարգ (և Ներսիսեան, Յովնանեան, Գայիանեան) դպրոցներ ընդունելու։ Աւանդւում են նաև ֆրանսերէն, գերմաներէն. ձեռագործ (կերտուածք, դաղում և կողովագործութիւն) և մարմնամարզութիւն։ Ընտանիքիս մէջ միասին ապրելու կայ 2 աշակերտի տեղ։ Ընդունելութիւնը սկսւած է։

Սօլօլակ, փող. Պասկևիչի, № 13.

ԹԷՅԻ ՀԱՄԱՐ ՊԷՉԷՆԻՅԷ ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ



ԷՅՆԵՄ.

МАГАЗИНЪ

Композиція

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія шведскаго композиціон. бѣлья.

→Носится не менѣе двухъ лѣтъ←

Постоянный большой выборъ свѣжаго товара

Воротниковъ, манишекъ и манжетъ.

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасонъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА

Լոյս տեսաւ

Ռ. Խան-Ազատ եւ Գ. Վարդանեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

27 նկարներով և մի մեծ գունաւոր քարտէսով։

Դասընթացք ծխ. դպրոցների IV բաժանմունքի և ժողովրդական ընթերցանութեան համար։

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.

Գլխաւոր պահեստը «Գուտտեմբերգ» գրավաճառանոցում. կարելի է դիմել և հեղինակներին՝—Тифлисъ. Сурпъ-Нишанское училище.



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւ Աշխարհում



ԱՆԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, չքեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՐՏՕՆԻԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՄԻԻՆԽ ԵՒ ՎԷՅՍ




1888

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ

# КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО

Торговли аптекарскими тозарами въ Тифлисѣ

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դեղագործական մթերքների առևտրի Թիֆլիզում

Բաժանմունքները Բագու և Բաթում քաղաքներում

Բժշկական, ֆարմացևտական արտադրութիւններ և պատրաստութիւններ, անուշահոտութիւններ և կոսմետիկա Ռուսաստանի և արտասահմանի յայտնի գործարաններից։

Հարուստ պահեստ լուսանկարչական ամեն տեսակ պատկանելիքների, նոր սեփական պրէյսկուրանտով։



ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Ընկերութեան վաճառանոցում (Երևանեան հրապարակի վրայ) ստացուած է նոր սիստեմի կշեռք, ձրի կշռելու յարգոյ հասարակութեան։

Գրասենեակ և գլխաւոր պահեստ Тифлисъ, Евангуловская ул. собст. д.

Հասցէն հեռագրի համար—Тифлисъ „САНИГАСЪ„

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ
Համառօտ
ԲԱՌԱՐԱՆ
Русско-Армянскiй словарь
(10,000 բառ, 406 էջ)
Գինն է 75 կոպ.
Դիմել՝ Чавчавадзевская ул ,
№ 25-а. 116 Арутюну Туманяну.

Առաջնակարգ համարներ
„ՎԻԿՏՕՐԻԱ“
Գտնւում է Թիֆլիսի կենդրոնում, Դւորցովայա փողոցի վրայ, փոխարքայի պալատի այգուն կից։
Համարները գեղեցիկ կերպով կահաւորւած, նորից հիմնովին վերանորոգւած և ամեն յարմարութիւններով։ Առաջինն անցնում է էլեկտրաքարշը։
Օրական վարձը 60 կ. մինչև 4 ր.։
Ամսով վարձողներին զիջումն։ Ընտանիքներին առանձնապէս տրւում են ամեն տեսակ յարմարութիւններ։
Ծառայողները վստահելի և քաղաքավարի են։ Սենեակներին կից կան տաք և սառը վաննաներ։ Էլեկտրական լուսաւորութիւն։
Հեռախօս № 1033

Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի ու Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
Հայերէնի դասագիրք
Լոյս տեսան
Ա. տարի, երրորդ տիպ. 30 կ.
Բ. տարի, երկրորդ տիպ, բարեփոխ. 45 կ.
Երկուսն էլ ընդունւած կովկասեան շըրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից, իբրև դասագիրք պետական դպրոցների համար։
Տպագրւում են.
Գ. տարի . . . . . 60 կոպ.
Դ. տարի . . . . . 75 կոպ.
Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները. Թիֆլիսում «ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» և Կենտրոնական, Բագւում Сотрудникъ, Երևանում Յովհաննիսեանի և Շուշում Բ. Տէր-Սահակեանի։

Մի խնամելիքներ հայ ընտանիք
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
բոլոր միջնակարգ դպրոցների համար, կարող են և պարապել նրանց հետ։
Հասցէն՝ Реутовская № 29
Բնակարան Բէգնազարեանի

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ
ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆԸ
(Фото-Цинкографiя)
ՏԵՂԱՓՈԽՒԵԼ է Պուշկինսկի փողոց, Պուշկինսկի Պասաժ.

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՒՈՂ
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. №24 4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն.
Դասընթացքն աւարտողներին տրւում են ատեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ պարապմունքները կատարւում են կուրսերում Լօնդօնի Pifman- և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպւած Muster- Comptoir-ում։ Նիւթերն առնւում են ռէալ կեանքից. Առարկաններն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ. գերմ. ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական. 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրայ, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավառ ձևերի ուղղումն), բ) ոչ պարտադիր. 1) օտար լեզուներ, 2) ապրանքագիտութիւն, 3) գեղագրագրաֆիա (ռեմինգտոն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարւում են և զատ զատ։ Խնդիրների ընդունելութիւնը 10—12 և 4—5 և կէս. ժ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկւում և տրւում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից. սեպտեմբերի 15-ից պարապմունքներ։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ
(Պուշկինեան փող. տուն Սանդուկեանի, վրաց սեմինարիայի դիմաց)
Ամէն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ
ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՌԻ
Ունինք մեծ քանակութեամբ թարթի զօշ. Դօնի և տեղական
բալիկ, ճիպա, ցալձվալա, եանի և այլ
ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԱՐ
Կովկասեան և արտասահմանեան ձկնային կանսերւներ
Գները ամենաչափաւոր

Ծխախոտի գործարանից՝
Ն. Ի.
ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ.
Ի վաճառ է հանւած
ՆՈՐ ՊԱՊԻՐՈՍ
«ТОВАРИЩЪ» 20 հատը 5 կոպ. (միջակ ձևի)
«ДРУЖБА» 20 հատը 5 կոպ. (բարակ ձևի)
Դիտողութիւն.
Առևտրական տունը վճռեց ի վաճառ հանել այդ պապիրոսները ամենաէժան կարիկեաներով, որպէսզի այդ կերպով հնարաւորութիւն լինի՝ պ. պ. ծխողներին միշտ էլ լաւ յատկութեան և սիրուելի համով ծխախոտ ընձեռել։
Ամեն տեղ էլ կարելի է պահանջել
Մեծ քանակութեամբ առած պատւէրները կը կատարւին ըստ չափու հնարաւորութեան։

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ
Скоропечатная „Дзмоба“ Московская ул. № 5.

# ՏԱՍ-ՔՍԱՆ ՏԱՐՈՒՑ ՅԵՏՈՅ ՕԴԱՅԻՆ ՆԱՒԵՐԸ




1 Գիւղացիները գնում են գործի։

2 Վարդապետն ու երիցփոխ հոգաբարձուն փախցնում են հաշիւները։

3 Սիրահարուած զոյգը և բարկացած ամուսինը։

4 Ոստիկանի օգնութիւնը։

ՅՈՒՆԱՑ ԱՆՓԱՌԱՍԷՐ ԹԱԳԱՒՈՐԸ



Հրաժարւում եմ գահից, չարժէ։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ԱՆՓԱՌԱՍԷՐ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ



—Գահիս համար տուն չեմ քանդում, այլ, այնպէս, շէնքերը խաղում եմ։